ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1775 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 1365-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող փաստաթղթերի նմուշօրինակ-ների միասնական հավաքածու ստեղծելու, դրա կազմավորման և վարման կարգը հաստատելու մասին» N 1365-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետը.

3) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը և N 1 հավելվածի վերնագիրը «հավաքածուի» բառից հետո լրացնել «ստեղծման, դրա» բառերով.

4) որոշման N 1 հավելվածի 1-ին կետը «(հավաքածու)» բառից հետո լրացնել «ստեղծման, դրա» բառերով.

5) որոշման N 1 հավելվածի 5-րդ կետում «կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության» բառերով.

6) որոշման N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից ներկայացվող փաստաթղթերի նմուշօրինակներ՝

1) վարորդական իրավունքի վկայական.

2) տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր (ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր):»,

բ. 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետ.

«1.1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից ներկայացվող փաստաթղթերի նմուշօրինակներ՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր և նույնականացման քարտ.

2) կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ.

3) քաղաքացիություն չունեցող անձին տրվող՝ անձը (ինքնությունը) հավաստող փաստաթղթեր.

4) անձի կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթեր.

5) ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հավաստող փաստաթղթեր:»,

գ. 5-րդ կետի «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով,

դ. 6-րդ կետի «տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և ենթակառուցվածքների» բառերով,

ե. 7-րդ կետի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի» բառերը փոխարինել «Կադաստրի կոմիտեի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ